ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2009 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ)
Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		
Արթուր Հակոբյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		12.02.2010թ.
Դավիթ Հարությունյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ		
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ Գլխավոր հաշվապահ		12/02/2010թ
Գարիկ Ադամյան	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ		12.02.2010
Արթուր Մելիքյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		12.02.2010

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ակտիվներ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 41,342,014 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 11,622,776 հազ. ՀՀ դրամով կամ 39.11%-ով, իսկ 30.09.09թ.-ի համեմատ՝ 12,299,981 հազ. ՀՀ դրամով կամ 42.35%-ով:

2009 թվականի 3-րդ եռամսյակի համեմատ, հաշվետու եռամսյակի ակտիվների աճի բարձր տեմպը պայմանավորված էր գործարար միջավայրի և հիփոթեքային շուկայի որոշակի ակտիվացմամբ, ինչպես նաև տնտեսության կայունացման ծրագրերի շրջանակներում Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից իրականացվող վարկային ծրագրերի ծավալային աճով:

Նախորդ տարվա 4-րդ եռամսյակի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 5,672,379 հազ. ՀՀ դրամ կամ 53.53%, և հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների՝ 4,010,202 հազ. ՀՀ դրամ կամ 32.97%, աճով:

2009 թվականի 3-րդ եռամսյակի վերջի համեմատ, Բանկի ակտիվների աճը նույնպես պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 9,215,873 հազ. ՀՀ դրամ կամ 130.66%, և հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների՝ 2,091,303 հազ. ՀՀ դրամ կամ 14.85%, աճով:

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված վարկերը և այլ փոխատվությունները կազմել են 16,174,566 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 4,010,202 հազ. դրամով կամ 32.97%-ով, իսկ 30.09.09թ.-ի համեմատ՝ 2,091,303 հազ. ՀՀ դրամով կամ 14.85%-ով:

Ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, այնպես էլ հաշվետու տարվա 3-րդ եռամսյակի համեմատ տրամադրված վարկերի մնացորդների աճը պայմանավորված է Բանկի կողմից տրամադրված վարկերի աճով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրվել է 10,000,239 հազ. ՀՀ դրամի վարկ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում՝ 7,484,709 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը՝ 99.7%, դասակարգված են որպես ստանդարտ վարկեր: Բանկը շարունակում է իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ վարկային ռիսկի ցածր մակարդակը պահպանելու ուղղությամբ :

Արժեթղթեր

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի ներդրումներն արժեթղթերում կազմել են 2,910,402 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1,677,747 հազ. ՀՀ դրամով կամ 36.57%-ով, իսկ 30.09.09թ. համեմատ՝ 657,816 հազ. ՀՀ դրամով կամ 18.44%-ով:

Նախորդ ժամանակահատվածների համեմատ, արժեթղթերում կատարված ներդրումների ծավալների նվազումը պայմանավորված է ֆինանսական շուկայում արձանագրված էական փոփոխությունների պատճառով պետական արժեթղթերի պորտֆելի

ծավալների և կառուցվածքի վերանայման շարունակական գործընթացով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 13,586,231 հազ. ՀՀ դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 11,283,941 հազ. ՀՀ դրամի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալային աճը նույնպես պայմանավորված է ֆինանսական շուկայում արձանագրված էական փոփոխություններով:

Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

- ❖ ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 84,383.9 հազ. ԱՄՆ դոլար,
- ❖ ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 264,919.3 հազ. ՌԴ ռուբլի,
- ❖ Եվրո գործարքների ծավալը՝ 49,826.1 հազ. եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնությունների արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 83,887 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 90,137 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Պարտավորություններ և Կապիտալ

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի պասիվների աճը (11,622,776 հազ. ՀՀ դրամով կամ 39.11%-ով) պայմանավորված է պարտավորությունների (11,323,569 հազ. դրամով կամ 51.08%-ով) և ընդհանուր կապիտալի (299,207 հազ. ՀՀ դրամով կամ 3.96%-ով) աճով:

Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդների նկատմամբ պարտավորությունների (9,363,440 հազ. ՀՀ դրամով կամ 57.23%-ով), ինչպես նաև բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների (2,165,303 հազ. ՀՀ դրամով կամ 42.09%-ով) աճով:

Հարկ է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 167,040 հազ. ՀՀ դրամով կամ 4.71%-ով:

30.09.09թ.-ի համեմատ, Բանկի պասիվներն աճել են 12,299,981 հազ. ՀՀ դրամով կամ 42.35%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պարտավորությունների (12,197,805 հազ. ՀՀ դրամով կամ 57.28%-ով) և ընդհանուր կապիտալի (102,176 հազ. ՀՀ դրամով կամ 1.32%-ով) աճով:

Ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 263,642 հազ. ՀՀ դրամով կամ 7.64%-ով՝ կազմելով 3,715,318 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու եռամսյակում Բանկի ընդհանուր կապիտալի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պայմանավորված է չբաշխված շահույթի աճով և վերագնահատման պահուստում վաճառքի համար մատչելի ֆինանսկան ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքով:

30.09.09թ. համեմատ, Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է չբաշխված շահույթի աճով՝ 125,541 հազ. ՀՀ դրամ:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 138,207 հազ. ՀՀ դրամով կամ 23.85%-ով՝ կազմելով 717,627 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից զուտ եկամուտները կազմել են 96,924 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 59,150 հազ. ՀՀ դրամով կամ 156.59%-ով:

Արտարժութային գործառնություններից ստացված համախմբված զուտ շահույթը նվազել է 6,250 հազ. ՀՀ դրամով կամ 6.93%-ով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է հաշվետու եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

		հազ. ՀՀ դրամ
Անվանումը	**2008թ. 4-րդ եռամսյակի համար**	**2009թ 4-րդ եռամսյակի համար**
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	579,420	717,627
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(223,278)	(253,010)
Զուտ տոկոսային եկամուտ	**356,142**	**464,617**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	85,369	130,078
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(47,595)	(33,154)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	**37,774**	**96,924**
Արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/ (վնաս)	90,137	83,887
Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից զուտ եկամուտ	(34,670)	19,551
Այլ եկամուտ	4,225	12,055
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	5,874	(25,391)
Անձնակազմի գծով ծախսեր	(196,526)	(217,176)
Հիմնական միջոցների մաշվածություն	(36,242)	(42,562)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(1,964)	(2,114)
Այլ ծախսեր	(151,902)	(185,632)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	**72,848**	**204,159**
Շահութահարկի գծով ծախս	**(39,583)**	**(78,618)**
Շահույթ հարկումից հետո	**33,265**	**125,541**

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 253,010 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 29,732 հազ. ՀՀ դրամով կամ 13.32%-ով:

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի անձնակազմի գծով ծախսերն աճել են 20,650 հազ. ՀՀ դրամով կամ 10.51%-ով՝ կազմելով 217,176 հազ. ՀՀ դրամ, հիմնական միջոցների մաշվածության ծախսերը՝ 6,320 հազ. ՀՀ դրամով կամ 17.44%-ով՝ կազմելով 42,562 հազ. ՀՀ դրամ, ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը՝ 150 հազ. ՀՀ դրամով կամ 7.64%-ով՝ կազմելով 2,114 հազ. ՀՀ դրամ:

Շահույթ և շահութաբերություն

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկն ստացել է 125,541 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 33,265 հազ. ՀՀ դրամ շահույթի դիմաց: Հաշվետու ժամանակահատվածի զուտ շահույթի, ակտիվների և կապիտալի միջին օրական մնացորդների ցուցանիշների հիման վրա ստորև ներկայացվում է Բանկի գործունեության շահութաբերությունը բնութագրող երկու հիմնական ֆինանսական գործակիցների արդյունքները.

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 1.66%,

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 0.32%:

Հաշվետու եռամսյակի 125,541 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթի հաշվարկով մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել 117 ՀՀ դրամ շահույթ մեկ բաժնետոմսին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 41 ՀՀ դրամ շահույթի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճը, որն իր արդյունքներով արտացոլվում է կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտներում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 59,150 հազ. ՀՀ դրամ կամ 156.59%՝ կազմելով 96,924 հազ. ՀՀ դրամ:

Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների և հեռախոսավարձերի ընդունումը, որը նախորդ տարվա նույն ժամակահատվածի համեմատ, աճել է 178,258.6 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 511,207.4 հազ. դրամ:

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 44,448, որը 2008 թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 18,423-ով: Բանկի ակտիվ հաճախորդների կազմը և կառուցվածքն արտացոլված են ստորև բերվող աղյուսակում:

Բանկի հաճախորդներ	Հաճախորդների քանակը		
	30.12.08	30.12.09	(+/-)
Իրավաբանական անձինք	954	1,873	919
Ֆիզիկական անձինք	25,071	42,575	17,504
Ընդամենը	**26,025**	**44,448**	**18,423**

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի հաճախորդների 4.2%-ն իրավաբանական, իսկ 95.8%-ը ֆիզիկական անձիք են:

Վճարահաշվարկային գործառնություններ

Ակրեդիտիվներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում Բանկը թողարկել է 147,266 ԱՄՆ դոլար գումարի ակրեդիտիվներ և տրամադրել 100,000 ԱՄՆ դոլարի միջազգային երաշխիք:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Բանկը թողարկել էր 114,024 ԱՄՆ դոլարի ընդհանուր գումարով ակրեդիտիվներ:

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների ծավալը կազմել է 38,646,479 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 38,040,216 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 5,895 հատով, որից 3,445-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, իսկ 2,450-ը՝ MasterCard միջազգային պլաստիկ քարտերին: Հաշվետու եռամսյակի ավարտին պլաստիկ քարտերի քանակը կազմել է 38,185 հատ:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ, ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2008 թվ., 4-րդ եռ.	2009 թվ., 4-րդ եռ.
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	33,265	125,541
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,933,159	7,544,716
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	0.67	1.66
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	33,265	125,541
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	28,297,109	39,444,611
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.12	0.32
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	33,265	125,541
Գործառնական եկամուտ	453,608	677,034
Զուտ շահույթի մարժա (NPM), %	7.33	18.54
Գործառնական եկամուտ	453,608	677,034
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	28,297,109	39,444,611
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	1.60	1.72
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	28,297,109	39,444,611
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,933,159	7,544,716
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.74	5.23
Զուտ տոկոսային եկամուտ	356,142	464,617
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,130,085	24,666,710
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	1.86	1.88
Տոկոսային եկամուտ	579,420	717,627
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,130,085	24,666,710
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	3.03	2.91
Տոկոսային ծախսեր	223,278	253,010
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	17,663,502	22,839,290
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	1.26	1.11

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	33,265	125,541
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. հատ	810	1,072
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), ՀՀ դրամ	41	117
Սպրեդ, %	1.76	1.80

Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով, և դիտարկվում են հետևյալ ցուցանիշների աճի մակարդակներով.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում՝ հիմնական շեշտադրումը դնելով վարկային ներդրումների աճի վրա,
- ժամկետային ավանդների մնացորդների և ցպահանջ ավանդների մնացորդների աճի ապահովում,
- Բանկի միջնորդական ծառայությունների ընդլայնման, սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- Բանկի զարգացման ռազմավարության ներքո, ինչպես նաև նոր հաճախորդների ներգրավման և մասնաճյուղային ցանցի ընդլայնման նպատակով, նախատեսվում է ստեղծել նոր մասնաճյուղեր ՀՀ այն տարածաշրջաններում, որտեղ ներկա չեն հիմնական մրցակից դիտարկվող բանկերի մասնաճյուղերը կամ, դրանց առկայության դեպքում, Բանկի մասնաճյուղերի ստեղծումը համարվում է ռազմավարական նշանակություն ունեցող և Բանկի զարգացման համար անհրաժեշտ քայլ,
- եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ,
- վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:

Համախմբված միջանկյալ հաշվետվություն ֆինանսական արդյունքների մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01.10.09թ.-ից - 31.12.09թ. ժամանակաշրջանի համար (չստուգված)	31.12.2009թ-ի տասներկու ամիսների համար (չստուգված)	01.10.08թ.-ից - 31.12.08թ. ժամանակաշրջանի համար (չստուգված)	31.12.2008թ-ի տասներկու ամիսների համար (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	717,627	2,438,358	579,420	2,100,127
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(253,010)	(1,005,200)	(223,278)	(713,908)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		464,617	1,433,158	356,142	1,386,219
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	130,078	372,222	85,369	282,940
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(33,154)	(101,618)	(47,595)	(103,329)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		96,924	270,604	37,774	179,611
Արտարժույթային գործարքներից զուտ շահույթ		83,887	289,218	90,137	351,975
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտ		19,551	63,366	(34,670)	17,191
Այլ եկամուտներ	8	12,055	41,644	4,225	36,678
Զուտ մասհանումներ ակտիվների ենթարավոր կորուստների պահուստներին	9	(25,391)	38,036	5,874	(30,226)
Անձնակազմի գծով ծախս	10	(217,176)	(758,669)	(196,526)	(562,793)
Հիմնական միջոցների մաշվածություն	18	(42,562)	(161,543)	(36,242)	(122,089)
Ոչ նյութական ակտիվների մաշվածություն	19	(2,114)	(8,319)	(1,964)	(7,795)
Այլ ծախսեր	11	(185,632)	(529,247)	(151,902)	(518,456)
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		204,159	678,248	72,848	730,315
Շահութահարկի գծով ծախս	12	(78,618)	(98,358)	(39,583)	(149,443)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		125,541	579,890	33,265	580,872
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		0.12	0.54	0.04	0.73
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		125,541	579,890	33,265	580,872
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս		125,541	579,890	33,265	580,872
Փոքրամասնության բաժնեմաս				-	

Բանկի վարչության նախագահ Ա. ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ Տ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2010թ.

Համախմբված միջանկյալ հաշվետվություն ֆինանսական դրության մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ք.Երևան,Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրություններ	31.12.2009թ.-ի դրությամբ (չստուգված)	31.12.2008թ.-ի դրությամբ (ստուգված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	16,268,962	10,524,093
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	4,721,252	974,768
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	16	16,174,566	12,164,364
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	2,910,402	2,996,407
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	26	-	1,591,742
Հիմնական միջոցներ	18	1,153,496	1,181,602
Ոչ նյութական ակտիվներ	19	(173,928)	53,747
Ընթացիկ հարկի գծով ակտիվ		24,913	-
Հետաձգված հարկային ակտիվներ	12	17,644	4,992
Վաճառքի համար պահվող ակտիվներ	20	45,448	46,505
Այլ ակտիվներ	21	199,259	94,047
Ընդամենը՝ ակտիվներ		41,342,014	29,632,267
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	7,309,953	4,859,672
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	25,725,656	16,601,573
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	250,205	400,789
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	112,348
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	-	-
Այլ պարտավորություններ	25	207,895	113,283
Ընդամենը՝ պարտավորություններ		33,493,709	22,087,665
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	27	5,362,005	5,362,005
Էմիսիոն եկամուտ		766,001	766,001
Գլխավոր պահուստ		300,000	270,000
Այլ պահուստներ		80,875	25,732
Չբաշխված շահույթ (վնաս)		1,339,424	1,120,864
Ընդամենը՝ կապիտալ		7,848,305	7,544,602
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		41,342,014	29,632,267

Բանկի գլխավոր հաշվապահ _____ Ա. ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ Ֆ.ԳԱԼՍՏՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2010թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված միջանկյալ հաշվետվություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստներ*	Հիմնական միջոցների գծով վերագնահատումից պահուստներ*	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)							
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2008թ. (ստուգված)	3,640,000	-	250,000	14,964	-	559,992	4,464,956
3. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝	-	-	-	10,768	-	-	10,768
4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	1,722,005	-	-	-	-	-	1,722,005
4.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	1,722,005	-	-	-	-	-	1,722,005
5. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	-	580,872	580,872
6. Բաշխված շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-
7. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	766,001	-	-	-	-	766,001
8. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	20,000	-	-	(20,000)	-
8.1. Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	20,000	-	-	(20,000)	-
9. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա վերջում առ 31 դեկտեմբերի 2008թ. (ստուգված)	5,362,005	766,001	270,000	25,732	-	1,120,864	7,544,602

Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ)							
1. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2009թ. (ստուգված)	5,362,005	766,001	270,000	25,732	-	1,120,864	7,544,602
10.Վերահաշվարկված մնացորդը	5,362,005	766,001	270,000	25,732	-	1,120,864	7,544,602
11. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝	-	-	-	55,143	-	-	55,143
11.1 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում	-	-	-	-	-	-	-
11.2.Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատումից աճ կամ նվազում	-	-	-	55,143	-	-	55,143
12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	-	-	-	-	-	-
Դուստր ընկերության չբաշխված շահույթ (վնաս)						(331,330)	(331,330)
13. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	-	579,890	579,890
14. Բաշխված շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-
15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
16. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	30,000	-	-	(30,000)	-
16.1. Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	30,000	-	-	(30,000)	-
17. Մնացորդը ֆինանսական տարվա վերջում առ 31 դեկտեմբերի 2009թ. (չստուգված)	5,362,005	766,001	300,000	80,875	-	1,339,424	7,848,305

Բանկի վարչության նախագահ _____ Ա. ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2010թ.

Համախմբված միջանկյալ հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	31.12.2009թ-ին ավարտված տասներկու ամիսների համար (չստուգված)	31.12.2008թ-ին ավարտված տասներկու ամիսների համար (ստուգված)
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Ստացված տոկոսներ		2,337,055	2,084,536
Վճարված տոկոսներ		-961,134	-742,289
Ստացված կոմիսիոն գումարներ		378,562	282,940
Վճարված կոմիսիոն գումարներ		-101,618	-103,329
Վաճառքի համար մատչելի արժեթղթերից օգուտ		63,366	17,191
Արտարժույթային գործառնություններից իրացված շահույթ		289,218	351,975
Այլ ստացված եկամուտներ		97,110	35,874
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		11,799	7,637
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		-656,870	-478,128
Վճարված այլ գործառնական ծախսեր		-290,008	-565,871
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		1,167,480	890,536
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)			
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում		-208,408	-150,279
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		-3,919,787	2,144,027
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		-3,195,029	-2,530,894
Այլ ակտիվներ		60,568	319,241
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		1,810,602	1,253,640
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		7,130,551	-1,269,921
Այլ պարտավորություններ		-368,013	-391,550
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		2,477,964	264,800
Վճարված շահութահարկ		-233,174	-87,095
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		2,244,790	177,705
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)			
Ներդրումային արժեթղթերի առք/վաճառք և իրացում		159,194	2,243,694
Հիմնական միջոցների առք		-130,561	-784,962
Հիմնական միջոցների վաճառք		107,627.00	1,096
Ոչ նյութական ակտիվների առք ու վաճառք		(728.00)	-16,710
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		-	-
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		135,532	1,443,118
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում			2,488,006
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		-	400,000
Բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		1,094,921	1,518,403
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		-	300,000
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		1,094,921	4,706,409
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		3,475,243	6,327,232
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		11,039,386	4,860,663
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների		1,635,103	-148,509
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ		16,149,732	11,039,386

Բանկի վարչության նախագահ Ա. ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ Տ.ԳԵՎՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2010թ.